ԿԱՐԾԻՔ
«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի[1] վերաբերյալ նկատառումները հանգում են հետևյալին.

1. Նախագծի 3-րդ, 4-րդ և 5-րդ հոդվածներով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագրքի[2] 99-րդ, 101-րդ և 102-րդ հոդվածներից հանվում կամ փոփոխվում է *նռնակների և բռնկիչների* հետ կապված կարգավորումները: Սակայն Կանոնագրքում առկա են վերոթվարկյալ հոդվածների հետ համարգային առումով փոխկապակցված այլ դրույթներ, որտեղ նման փոփոխություններ չեն առաջարկվել (օրինակ՝ հոդված 140, հավելված 7-ի Ծանոթության 2-րդ կետ), ինչի արդյունքում Կանոնագրքում կարող են առաջանալ ներքին հակասություններ:

Այսպես, Նախագծով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել Կանոնագրքի 102-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը, որի համաձայն ձեռքի նռնակները պահվում են առանձին մետաղյա արկղերում, ընդ որում, բռնկիչները պահվում են հատուկ անջրաթափանց փաթեթում, նռնակներից առանձին: Մինչդեռ, Կանոնագրքի 140-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ, որը Նախագծով փոփոխության չի ենթարկվում, սահմանված է, որ անհրաժեշտության դեպքում պահակապետը բացում է մարտական փամփուշտների, նռնակների և բռնկիչների պահեստային արկղերը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծով առաջարկվող վերոնշյալ փոփոխությանը համապատասխանեցնել Կանոնագրքի փոխկապակցված հոդվածները և կարգավորումները:

2. Նախագծի 6-րդ հոդվածով Կանոնագրքի 106-րդ հոդվածի 1-ին պարբերությունում «անցագրերի» բառը փոխարինվում է «թույլտվության գրության» բառերով: Սակայն Կանոնագրքի մի շարք հոդվածներում (օրինակ՝ հոդված 157, 195) պահպանվում է «անցագիր» եզրույթը:

---

[1]Այսուհետ՝ Նախագիծ
[2]Այսուհետ՝ Կանոնագիրք

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Իրավական ակտում տարբեր հասկացությունները չեն կարող օգտագործվել միևնույն տերմինով:

Ուստի, Նախագծում տեղ գտած և Կանոնագրքում առկա ձևակերպումների միասնականությունը և հստակությունն ապահովելու համար առաջարկում ենք համապատասխանեցնել Կանոնագրքում և Նախագծում առկա ձևակերպումները:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ